

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի 2001/95/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

Արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և մասնավորապես՝ դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը²,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում նշված ընթացակարգի համաձայն³ և ելնելով 2001 թվականի օգոստոսի 2-ի՝ Համաձայնեցման կոմիտեի կողմից հաստատված համատեղ տեքստից,

քանի որ՝

- 1) «Արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին» Խորհրդի 1992 թվականի հունիսի 29-ի 92/59/ԵՏՀ հրահանգի 16-րդ հոդվածի համաձայն⁴ Խորհուրդը նշված հրահանգի իրականացման համար սահմանված ամսաթվից չորս տարի հետո ձեռք բերած փորձի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցի

¹ ՊՏ C 337 E, 28.11.2000թ., էջ 109, և

ՊՏ C 154 E, 29.05.2001թ., էջ 265:

² ՊՏ C 367, 20.12.2000թ., էջ 34:

³ Եվրոպական պառլամենտի 2000 թվականի նոյեմբերի 15-ի եզրակացություն (ՊՏ C 223, 08.08.2001թ., էջ 154), Խորհրդի 2001 թվականի փետրվարի 12-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 93, 23.03.2001թ., էջ 24) և Եվրոպական պառլամենտի 2001 թվականի մայիսի 16-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել): Եվրոպական պառլամենտի 2001 թվականի հոկտեմբերի 4-ի որոշում և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի որոշում:

⁴ ՊՏ L 228, 11.08.1992թ., էջ 24:

հիման վրա պետք է որոշեր, թե արդյոք անհրաժեշտ է համապատասխան առաջարկներով փոփոխել 92/59/ԵՏՀ հրահանգը: Անհրաժեշտ է որոշ առումներով փոփոխել 92/59/ԵՏՀ հրահանգը՝ վերջինիս որոշ դրույթներ փորձի, ինչպես նաև սպառողական ապրանքների անվտանգության մասով նոր եւ համապատասխան զարգացումների, Պայմանագրի՝ հատկապես հանրային առողջությանը վերաբերող 152-րդ հոդվածում եւ սպառողների պաշտպանությանը վերաբերող 153-րդ հոդվածում կատարված փոփոխությունների եւ նախազգուշական սկզբունքի հիման վրա կատարելագործելու, ուժեղացնելու կամ հստակեցնելու նպատակով: 92/59/ԵՏՀ հրահանգը, ուստի, պետք է վերախմբագրվի՝ հստակության նկատառումներից ելնելով: Հրահանգի վերախմբագրման ժամանակ ծառայությունների անվտանգությունը դուրս է մնում սույն հրահանգի կարգավորման շրջանակից, քանի որ Հանձնաժողովը նախատեսում է սահմանել ծառայությունների անվտանգության ապահովման եւ ծառայություններ մատուցողների պատասխանատվության մասով Համայնքի գործողությունների անհրաժեշտությունը, հնարավորությունները եւ առաջնահերթությունները՝ համապատասխան առաջարկներ ներկայացնելու նպատակով,

- 2) կարելի է ընդունել միջոցներ ներքին շուկայի գործունեության բարելավման համար, որն առանց ներքին սահմանների տարածք է, որտեղ ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժը,
- 3) Համայնքի դրույթների բացակայության պարագայում արտադրանքի անվտանգության վերաբերյալ անդամ պետությունների հորիզոնական օրենսդրությամբ, որով տնտեսավարող սուբյեկտների համար մասնավորապես սահմանվում է միայն անվտանգ արտադրանք շուկայահանելու ընդհանուր պարտավորություն, կարող է նախատեսվել սպառողների պաշտպանության տարբեր մակարդակներ: Այդպիսի

- անհամապատասխանությունները եւ որոշ անդամ պետություններում հորիզոնական օրենսդրության բացակայությունը կարող են ստեղծել առեւտրի խոչընդոտներ եւ խաթարել մրցակցությունը ներքին շուկայում,
- 4) սպառողների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար Համայնքը պետք է նպաստի սպառողների առողջության եւ անվտանգության պահպանությանը: Համայնքի հորիզոնական օրենսդրությունը, որով սահմանվում է արտադրանքի անվտանգության ընդհանուր պահանջ եւ ներառում է արտադրողների ու դիստրիբյուտորների ընդհանուր պարտավորությունների, արտադրանքի անվտանգության մասով Համայնքի պահանջների կիրարկման, տեղեկությունների արագ փոխանակման վերաբերյալ դրույթներ եւ որոշ դեպքերում Համայնքի մակարդակով իրականացվող գործողություններ, պետք է նպաստի այդ նպատակի իրագործմանը,
- 5) չափազանց դժվար է արտադրված կամ հետագայում արտադրվելիք յուրաքանչյուր արտադրանքի համար ընդունել Համայնքի օրենսդրություն: Անհրաժեշտ է ունենալ հորիզոնական բնույթի ընդգրկուն օրենսդրական դաշտ, որով կկարգավորվի նշված արտադրանքը, ինչպես նաեւ առկա բացերը, մասնավորապես՝ գործող կոնկրետ օրենսդրության սպասվելիք վերանայումը, եւ կլրացվեն կոնկրետ գործող կամ հետագայում մշակվելիք օրենսդրության դրույթները՝ մասնավորապես ապահովելով Պայմանագրի 95-րդ հոդվածով սահմանված կարգով սպառողների անվտանգության եւ առողջության պահպանության բարձր մակարդակ,
- 6) ուստի անհրաժեշտ է Համայնքի մակարդակով մշակել անվտանգության ընդհանուր պահանջ շուկայահանված կամ սպառողներին այլ կերպ մատակարարված կամ մատչելի դարձված ցանկացած արտադրանքի համար, որը նախատեսված է սպառողների համար, կամ հավանական է, որ կօգտագործվի նրանց կողմից՝ ողջամտորեն կանխատեսելի պայմանների

համաձայն, նույնիսկ եթե այն նախատեսված չէ նրանց համար: Նշված բոլոր դեպքերում դիտարկվող արտադրանքը կարող է վտանգ ներկայացնել սպառողների առողջության եւ անվտանգության համար, որը պետք է կանխել: Ուստի օգտագործված որոշ ապրանքներ պետք է իրենց բնույթով գործածությունից դուրս մնան,

- 7) սույն հրահանգը պետք է տարածվի արտադրանքի վրա՝ անկախ վաճառքի մեթոդներից, ներառյալ՝ հեռավորության վրա իրականացվող եւ էլեկտրոնային վաճառքը,
- 8) արտադրանքի անվտանգությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան հայեցակետերը, մասնավորապես սպառողների այն կատեգորիաները, որոնք կարող են հատկապես խոցելի լինել դիտարկվող արտադրանքից բխող ռիսկերի նկատմամբ, դրանք մասնավորապես երեխաներն ու ծերերն են,
- 9) սույն հրահանգով չեն կարգավորում ծառայությունները, սակայն սպառողների պաշտպանության համապատասխան նպատակներն իրագործելու նպատակով դրա դրույթները պետք է կիրառվեն նաեւ արտադրանքի այն տեսակների վրա, որոնք սպառողների կողմից օգտագործվելու նպատակով մատակարարվում կամ մատչելի են դարձվում վերջիններիս համար ծառայությունների մատուցման համատեքստում: Ծառայություն մատուցողների կողմից սպառողներին ծառայություն մատուցելու նպատակով օգտագործվող սարքի անվտանգությունը չի մտնում սույն հրահանգի կարգավորման շրջանակների մեջ, քանի որ այն պետք է կարգավորվի տրամադրվող ծառայության անվտանգության հետ համատեղ: Սույն հրահանգի կարգավորման շրջանակի մեջ չի մտնում մասնավորապես ծառայություն մատուցողի կողմից գործարկվող այն սարքը, որով երթեւեկում կամ ճամփորդում են սպառողները,

- 10) արտադրանքի այն տեսակները, որոնք նախատեսված են բացառապես մասնագիտական գործունեություն ծավալելու համար, սակայն աստիճանաբար ներխուժել են սպառողական շուկա, պետք է կարգավորվեն սույն հրահանգի պահանջներով, քանի որ դրանք ողջամտորեն կանխատեսելի պայմաններում գործածվելու պարագայում վտանգում են սպառողների առողջությունը եւ անվտանգությունը,
- 11) առավել կոնկրետ դրույթների բացակայության դեպքում համապատասխան արտադրանքի անվտանգությունը կարգավորող Համայնքի օրենսդրության շրջանակներում սույն հրահանգի բոլոր դրույթները պետք է կիրառվեն՝ սպառողների առողջությունը եւ անվտանգությունը ապահովելու համար,
- 12) եթե Համայնքի կոնկրետ օրենսդրությամբ սահմանվում են անվտանգության պահանջներ, որոնք կարգավորում են համախառնապես արտադրանքից բխող որոշ վտանգներ կամ վտանգի կատեգորիաներ, ապա նշված վտանգների հետ կապված՝ տնտեսավարող սուբյեկտների պարտավորությունները կոնկրետ օրենսդրության դրույթներով սահմանվածներն են, մինչդեռ սույն հրահանգի ընդհանուր անվտանգության պահանջները պետք է կիրառվեն մյուս վտանգների համար,
- 13) արտադրողների եւ դիստրիբյուտորների մյուս պարտավորություններին, անդամ պետությունների պարտավորություններին եւ լիազորություններին, տեղեկությունների փոխանակմանը եւ արագ միջամտություն պահանջող իրավիճակներին, տեղեկությունների տարածմանը եւ գաղտնիությանը վերաբերող սույն հրահանգի դրույթները կիրառվում են Համայնքի իրավունքի կոնկրետ կանոններով կարգավորվող արտադրանքի դեպքում, եթե նշված կանոններով արդեն իսկ այդպիսի պարտավորություններ չեն նախատեսվում,
- 14) սույն հրահանգի ընդհանուր անվտանգության պահանջի արդյունավետ եւ համահունչ իրականացումն ապահովելու նպատակով կարելու է մշակել արտադրանքի որոշ տեսակները եւ վտանգները կարգավորող եվրոպական

կամավոր ստանդարտներ այնպես, որպեսզի ենթադրվի, որ այն արտադրանքը, որը համապատասխանում է եվրոպական ստանդարտը փոխատեղող ազգային ստանդարտին, համապատասխանում է նշված պահանջին,

- 15) սույն հրահանգի նպատակներով եվրոպական ստանդարտները պետք է մշակվեն Ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից այն մանդատների շրջանակներում, որոնք սահմանել է Հանձնաժողովը համապատասխան կոմիտեների աջակցությամբ: Ապահովելու համար, որ ստանդարտի համաձայն արտադրված արտադրանքը բավարարի անվտանգության ընդհանուր պահանջը, Հանձնաժողովը, որին աջակցում է անդամ պետությունների ներկայացուցիչներից բաղկացած կոմիտեն, պետք է սահմանի այն պահանջները, որոնք պետք է բավարարեն ստանդարտները: Նշված պահանջները պետք է ներառվեն Ստանդարտացման մարմիններին տրված մանդատների շրջանակում,
- 16) կոնկրետ կանոնակարգերի եւ Հանձնաժողովի կողմից սահմանված մանդատների համաձայն մշակված եվրոպական ստանդարտների բացակայության կամ նշված ստանդարտները չկիրառելու դեպքում արտադրանքի անվտանգությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով մասնավորապես համապատասխան եվրոպական կամ միջազգային ցանկացած այլ ստանդարտ փոխատեղող ազգային ստանդարտները, Հանձնաժողովի առաջարկությունները կամ ազգային ստանդարտները, միջազգային ստանդարտները, պատշաճ գործելակերպի կանոնները, համապատասխան զարգացումների և ձեռքբերումների առկա մակարդակը եւ անվտանգությունը, որը սպառողները կարող են ողջամտորեն ակնկալել: Այս համատեքստում Հանձնաժողովի առաջարկությունները կարող են ապահովել սույն հրահանգի համահունչ եւ արդյունավետ կիրարկումը, որը պետք է իրականացվի եվրոպական ստանդարտների ներմուծումից հետո կամ այն վտանգների եւ (կամ) արտադրանքի մասով, որոնց առումով նշված ստանդարտների իրականացումը հնարավոր կամ նպատակահարմար չէ,

- 17) իրավասու մարմինների կողմից ընդունվող համապատասխան անկախ սերտիֆիկացումը կարող է հավաստել արտադրանքի անվտանգության մասով կիրառվող չափորոշիչների հետ արտադրանքի համապատասխանությունը,
- 18) անհրաժեշտ է, որ անվտանգության ընդհանուր պահանջը կատարելու պարտավորության հետ տնտեսավարող սուբյեկտների վրա դրվեն այլ պարտավորություններ, քանի որ նշված սուբյեկտների կողմից իրականացվող գործողություններն անհրաժեշտ են որոշ հանգամանքներում սպառողներին ներկայացվող վտանգները կանխելու համար,
- 19) արտադրողների լրացուցիչ պարտավորությունները ներառում են արտադրանքի բնութագրերին համահունչ միջոցների ընդունում, որը հնարավորություն է տալիս նրանց տեղեկացված լինել արտադրանքից բխող հնարավոր վտանգների մասին, սպառողներին տրամադրել տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան նրանց գնահատել եւ կանխել վտանգները, նախազգուշացնել սպառողներին այն վտանգների մասին, որոնք բխում են սպառողներին արդեն մատակարարված վտանգավոր արտադրանքից, կասեցնել նշված արտադրանքի շրջանառությունը եւ որպես վերջին միջոց, հարկ եղած դեպքում հետ կանչել դրանք, ինչը, կախված անդամ պետություններում կիրառվող դրույթներից, կարող է ներառել փոխհատուցման համապատասխան ձեւ, օրինակ՝ փոխանակում կամ հատուցում,
- 20) դիստրիբյուտորները պետք է օգնեն անվտանգության կիրառվող պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու հարցում: Դիստրիբյուտորների վրա դրված պարտավորությունները կիրառվում են իրենց համապատասխան պարտականություններին համահունչ: Մասնավորապես բարեգործական գործունեության համատեքստում կարող է հնարավոր չլինել մասնավոր անձանց կողմից տրամադրված օգտագործված

առանձին առարկաների դեպքում իրավասու մարմիններին հնարավոր վտանգների եւ արտադրանքի ծագման վերաբերյալ տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելը,

- 21) թե՛ արտադրողները եւ թե՛ դիստրիբյուտորները պետք է համագործակցեն գործող իրավասու մարմինների հետ՝ կանխելու վտանգները եւ նրանց տեղեկացնելու այն դեպքում, երբ գտնում են, որ մատակարարված արտադրանքը վտանգավոր է: Այդպիսի տեղեկություններ տրամադրելու պայմանները պետք է սահմանվեն սույն հրահանգում՝ վերջինիս արդյունավետ իրականացումը ապահովելու համար՝ միեւնույն ժամանակ խուսափելով տնտեսավարող սուբյեկտների եւ մարմինների վրա դրվող լրացուցիչ բեռից,
- 22) արտադրողների եւ դիստրիբյուտորների վրա դրված պարտավորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անդամ պետությունները պետք է ստեղծեն կամ նշանակեն մարմիններ, որոնք պատասխանատու կլինեն արտադրանքի անվտանգության դիտանցման համար եւ կունենան համապատասխան միջոցներ՝ ձեռնարկելու, ներառյալ՝ արդյունավետ, համաչափ եւ տարհանողիչ պատժամիջոցներ կիրառելու լիազորություններ եւ ապահովելու նշանակված տարբեր մարմինների միջեւ աշխատանքների պատշաճ համակարգում,
- 23) անհրաժեշտ է, որ անդամ պետությունները մասնավորապես ունենան լիազորություն անմիջապես եւ արդյունավետորեն պահանջելու կամ կազմակերպելու արդեն շուկայահանված վտանգավոր արտադրանքի շրջանառության կասեցումը եւ որպես վերջին միջոց պահանջելու, համաձայնեցնելու կամ կազմակերպելու սպառողներին արդեն մատակարարված վտանգավոր արտադրանքի հետկանչը սպառողներից: Նշված լիազորությունները պետք է կիրառվեն, երբ արտադրողները եւ դիստրիբյուտորներն իրենց պարտավորություններին համապատասխան չեն

կարողանում կանխել սպառողներին սպառնացող վտանգները: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում մարմինները պետք է ունենան ցանկացած անհրաժեշտ միջոց ընտրելու եւ արագ կիրառելու ցանկացած համապատասխան լիազորություն եւ ընթացակարգեր,

- 24) սպառողների անվտանգությունը մեծապես կախված է Համայնքի արտադրանքի անվտանգության պահանջների ակտիվ կիրարկումից: Անդամ պետությունները հետևաբար պետք է մշակեն համակարգված մոտեցումներ՝ ապահովելու համար շուկայի վերահսկողության եւ կիրարկման մյուս գործողությունների արդյունավետությունը, ինչպես նաեւ պետք է ապահովեն դրանց մատչելիությունը հանրության եւ շահագրգիռ կողմերի համար,
- 25) անհրաժեշտ է, որ անդամ պետությունների իրավապահ մարմինները համագործակցեն՝ ապահովելու սույն հրահանգով նախատեսված պաշտպանության նպատակների իրագործումը: Ուստի անհրաժեշտ է խթանել անդամ պետությունների իրավապահ մարմինների եվրոպական ցանցի գործունեությունը Համայնքի մյուս ընթացակարգերի հետ համակարգված եղանակով՝ դյուրացնելու մասնավորապես Համայնքի տեղեկատվության արագ փոխանակման համակարգի (SUΦՀ) գործունեությունը, աշխատանքային մակարդակում շուկայի վերահսկողության շուրջ ընդլայնված համագործակցությունը եւ կիրարկման մյուս գործողությունները, մասնավորապես՝ վտանգի գնահատումը, արտադրանքի փորձաքննությունը, փորձի եւ գիտական գիտելիքի փոխանակումը, վերահսկման համատեղ ծրագրերի իրականացումը եւ վտանգավոր արտադրանքի հետազոտությունը, շրջանառության կասեցումը կամ հետկանչը,
- 26) սպառողների առողջության եւ անվտանգության պահպանության հետևողական, բարձր մակարդակ եւ ներքին շուկայի ամբողջականության

պահպանում ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ Հանձնաժողովը տեղյակ լինի ցանկացած այն միջոցի մասին, որը սահմանափակում է արտադրանքի շուկայահանումը կամ պահանջում է դրա շրջանառության կասեցում կամ հետկանչ: Նշված միջոցները պետք է ձեռնարկվեն Պայմանագրի, մասնավորապես՝ դրա 28-րդ, 29-րդ եւ 30-րդ հոդվածների դրույթներին համապատասխան,

- 27) արտադրանքի անվտանգության արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար անհրաժեշտ է ազգային եւ Համայնքի մակարդակով ունենալ այնպիսի վտանգավոր իրավիճակներում տեղեկությունների արագ փոխանակման համակարգ, երբ անհրաժեշտ է արտադրանքի անվտանգության ապահովման մասով արագ միջամտություն: Նպատակահարմար կլինի նաեւ սույն հրահանգով նախատեսել համակարգի գործունեության մանրամասն ընթացակարգեր եւ Հանձնաժողովին, որին աջակցում է Խորհրդատվական կոմիտեն, տալ դրանք հարմարեցնելու լիազորություն,
- 28) սույն հրահանգով նախատեսվում է կատարման համար ոչ պարտադիր ուղեցույցների մշակում, որոնց նպատակն է նշել պարզ եւ հստակ այնպիսի չափորոշիչներ եւ գործնական կանոններ, որոնք կարող են փոփոխվել՝ մասնավորապես հնարավորություն տալով արդյունավետորեն ծանուցելու այն միջոցների մասին, որոնք սահմանափակում են արտադրանքի շուկայահանումը սույն հրահանգով նախատեսված դեպքերում՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով այն իրավիճակների շրջանակը, որոնց առնչվել են անդամ պետությունները եւ տնտեսավարող սուբյեկտները: Ուղեցույցները պետք է մասնավորապես ներառեն չափորոշիչներ լուրջ վտանգի սահմանումը կիրառելու համար, որպեսզի դյուրացվի նշված վտանգների դեպքում համապատասխան դրույթների հետևողական իրականացումը,

- 29) անդամ պետությունները հատկապես իրենց տարածքում գտնվող վտանգավոր արտադրանքի հետ կապված պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ Պայմանագրի, մասնավորապես՝ դրա 28-րդ, 29-րդ եւ 30րդ հոդվածների դրույթներին համապատասխան,
- 30) այնուամենայնիվ, եթե անդամ պետություններն ունեն արտադրանքի որոշ տեսակներից բխող վտանգը վերացնելու տարբերվող մոտեցումներ, ապա նշված տարբերությունները կարող են հանգեցնել սպառողների պաշտպանության հարցում անընդունելի հակասությունների եւ կարող են ներհամայնքային առեւտրի խոչընդոտ դառնալ,
- 31) կարող է անհրաժեշտություն առաջանալ կարգավորելու արագ միջամտություն պահանջող՝ արտադրանքի անվտանգության հետ կապված այնպիսի լուրջ խնդիրներ, որոնք ազդում կամ մոտ ապագայում կարող են ազդել ամբողջ Համայնքի կամ դրա զգալի մասի վրա, եւ որոնք, հաշվի առնելով արտադրանքից բխող անվտանգության խնդիրների բնույթը, չեն կարող արդյունավետորեն կարգավորվել այնպես, որ համարժեք լինեն հրատապության աստիճանին՝ արտադրանքի կամ արտադրանքի կատեգորիայի նկատմամբ կիրառվող Համայնքի իրավունքի կոնկրետ կանոններով սահմանված ընթացակարգերին համապատասխան,
- 32) ուստի անհրաժեշտ է նախատեսել համապատասխան մեխանիզմ, որը հնարավորություն կտա որպես վերջին միջոց ընդունելու ամբողջ Համայնքում կիրառելի միջոցներ՝ անդամ պետություններին հասցեագրված որոշման ձեւով՝ լուրջ վտանգ ներկայացնող արտադրանքի հետեւանքով ստեղծված իրավիճակները կարգավորելու նպատակով: Այդպիսի որոշմամբ պետք է արգելվի համապատասխան արտադրանքի արտահանումը, եթե դիտարկվող դեպքում բացառիկ հանգամանքներում թույլատրվում է մասնակի արգելք, կամ ընդհանրապես վերացվում է արգելքը, մասնավորապես՝ նախնական համաձայնության համակարգ ստեղծված լինելու պարագայում: Ավելին, արտահանումների արգելքը պետք է

ուսումնասիրվի՝ նպատակ ունենալով կանխել սպառողների առողջությանը եւ անվտանգությանը սպառնացող վտանգը: Քանի որ նշված որոշումն ուղղակիորեն կիրառելի չէ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, ապա անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ այն իրականացնելու համար: Նշված ընթացակարգի համաձայն ընդունված միջոցները միջանկյալ միջոցներ են՝ անվտանգ, երբ դրանք կիրառվում են առանձին կերպով նույնականացված արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակների նկատմամբ: Այդպիսի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը պատշաճ կերպով գնահատելու եւ դրանց լավագույնս նախապատրաստվելու նպատակով այդ միջոցները պետք է ձեռնարկվեն Հանձնաժողովի կողմից, որին աջակցում է կոմիտեն, անդամ պետությունների եւ համապատասխան վտանգը վերացնելու համար պատասխանատու Գիտական հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, եթե ծագում են Համայնքի գիտական հարցերով կոմիտեի իրավասության շրջանակին պատկանող գիտական հարցեր,

- 33) սույն հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգեր սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան¹,
- 34) սույն հրահանգի արդյունավետ եւ համահունչ կիրարկումը ապահովելու նպատակով կարող է անհրաժեշտություն առաջանալ կոմիտեում քննարկելու դրա կիրարկման հետ կապված տարբեր հայեցակետեր,
- 35) անհրաժեշտ է ապահովել արտադրանքի անվտանգության վերաբերյալ մարմինների մոտ առկա տեղեկությունների մատչելիությունը հանրության համար: Այնուամենայնիվ, Պայմանագրի 287-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գաղտնիքը պետք է պաշտպանվի այնպես, որպեսզի ապահովվի շուկայի վերահսկողության աշխատանքների եւ պաշտպանության միջոցների արդյունավետությունը,

¹ ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

- 36) սույն հրահանգը չպետք է ազդի տուժածների իրավունքների վրա Խորհրդի՝ «Խոտանված արտադրանքի համար պատասխանատվության վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական դրույթների համապատասխանեցման մասին» 1985 թվականի հուլիսի 25-ի 85/374/ԵՏՀ հրահանգի իմաստով¹,
- 37) անհրաժեշտ է, որ անդամ պետությունները, իրավասու մարմինների կողմից արտադրանքի շուկայահանումը սահմանափակող կամ դրա շրջանառության կասեցումը կամ հետկանչը պահանջող միջոցների ձեռնարկման հետ կապված, նախատեսեն իրավասու դատարաններ դիմելու ընթացակարգեր,
- 38) ավելին, ներմուծված արտադրանքին վերաբերող միջոցների, ինչպես օրինակ՝ արտահանումներն արգելելուն վերաբերող միջոցների ընդունումը, նպատակ ունենալով կանխել սպառողների առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգը, պետք է համապատասխանի Համայնքի միջազգային պարտավորություններին,
- 39) Հանձնաժողովը պետք է պարբերաբար ուսումնասիրի սույն հրահանգի կիրարկման եղանակը եւ ստացված արդյունքները՝ կապված մասնավորապես շուկայի վերահսկողության համակարգերի գործունեության, տեղեկությունների արագ փոխանակման եւ Համայնքի մակարդակով ընդունված միջոցների հետ՝ Համայնքում սպառողական արտադրանքի անվտանգության համար կարելի է այլ խնդիրների հետ միասին, եւ Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին ներկայացնի տվյալ հարցերի վերաբերյալ պարբերական զեկույցներ,
- 40) սույն հրահանգը չպետք է ազդի 92/59/ԵՏՀ հրահանգի փոխատեղման եւ կիրարկման վերջնաժամկետներին վերաբերող՝ անդամ պետությունների պարտավորությունների վրա,

¹ ՊՏ L 210, 07.08.1985թ., էջ 29: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999/34/ԵՀ հրահանգով (ՊՏ L 141, 04.06.1999թ., էջ 20) փոփոխված հրահանգ:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

Նպատակը, գործողության ոլորտը եւ սահմանումները

Հոդված 1

1. Սույն հրահանգի նպատակը շուկայահանված արտադրանքի անվտանգ լինելն ապահովելն է:
2. Սույն հրահանգը պետք է կիրառվի 2(ա) հոդվածով սահմանված արտադրանքի բոլոր տեսակների նկատմամբ: Հրահանգի դրույթներից յուրաքանչյուրը պետք է կիրառվի, քանի որ Համայնքի իրավունքի կանոնները չունեն նույն նպատակը հետապնդող հատուկ դրույթներ, որոնք կկարգավորեն համապատասխան արտադրանքի անվտանգությունը:

Եթե արտադրանքի նկատմամբ կիրառվում են Համայնքի օրենսդրությամբ սահմանված անվտանգության հատուկ պահանջներ, ապա սույն հրահանգը պետք է տարածվի միայն նշված պահանջներով չկարգավորվող հայեցակետերի եւ վտանգների կամ վտանգի կատեգորիաների վրա: Սա նշանակում է, որ՝

- ա) 2(բ) եւ (գ), 3-րդ եւ 4-րդ հոդվածները չպետք է տարածվեն նշված արտադրանքի վրա այնքանով, որքանով այն վերաբերում է կոնկրետ օրենսդրությամբ կարգավորվող վտանգներին կամ վտանգի կատեգորիաներին.
- բ) 5-18-րդ հոդվածները պետք է կիրառվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունեն նշված հոդվածներով կարգավորվող հայեցակետերը կարգավորող հատուկ դրույթներ, որոնք հետապնդում են միևնույն նպատակը:

Հոդված 2

Սույն հրահանգի նպատակներով՝

ա) «արտադրանք» նշանակում է ցանկացած արտադրանք, այդ թվում՝ ծառայություն մատուցելու համատեքստում, որը նախատեսված է սպառողների համար, կամ հավանական է, որ ողջամտության սահմաններում կանխատեսելի պայմաններում կօգտագործվի սպառողների կողմից, նույնիսկ եթե այն նախատեսված չէ նրանց համար եւ առետրային գործունեության ընթացքում մատակարարվել կամ մատչելի է դարձվել դիտարկման համար կամ այլ նպատակով եւ եղել է նոր, օգտագործված կամ ձեւափոխված:

Սույն սահմանումը չպետք է կիրառվի «երկրորդ ձեռքից» որպես անտիկվարիատ կամ նախքան օգտագործվելը վերանորոգման կամ ձեւափոխման ենթակա՝ մատակարարված արտադրանքի նկատմամբ՝ պայմանով, որ մատակարարն այդ մասին հստակ տեղեկացնի այն անձին, որին նա մատակարարում է արտադրանքը,

բ) «անվտանգ արտադրանք» նշանակում է ցանկացած արտադրանք, որն օգտագործման, այդ թվում՝ պիտանիության նորմալ կամ ողջամտության սահմաններում կանխատեսելի պայմանների եւ հարկ եղած դեպքում՝ շահագործման, տեղադրման եւ պահպանման պահանջների դեպքում չի ներկայացնում որեւէ վտանգ կամ ներկայացնում է միայն արտադրանքի օգտագործման հետ համատեղելի նվազագույն վտանգ, որն ընդունելի եւ համատեղելի է մարդկանց անվտանգության եւ առողջության պահպանության բարձր մակարդակի հետ՝ հաշվի առնելով մասնավորապես հետեւյալ հայեցակետերը՝

i) արտադրանքի բնութագիրը, ներառյալ՝ դրա բաղադրությունը, փաթեթավորումը, հավաքման եւ հարկ եղած դեպքում՝ տեղադրման եւ պահպանման ցուցումները.

- ii) այլ արտադրատեսակների վրա դրա ազդեցությունը, եթե հնարավոր է կանխատեսել, որ այն կօգտագործվի այլ արտադրատեսակների հետ.
- iii) արտադրանքը ներկայացնելը, պիտակավորումը, դրա օգտագործման, հեռացման վերաբերյալ ցանկացած զգուշացում ու ցուցում եւ արտադրանքի վերաբերյալ ցանկացած այլ նշում կամ տեղեկություն.
- iv) արտադրանքի օգտագործման ժամանակ ռիսկի խմբի մեջ մտնող սպառողների կատեգորիաները, մասնավորապես՝ երեխաները եւ ծերերը:

Անվտանգության ավելի բարձր մակարդակներ ապահովելու հնարավորությունը կամ ավելի քիչ վտանգ ներկայացնող արտադրատեսակների առկայությունը հիմք չեն, որ արտադրանքը համարվի «վտանգավոր».

- գ) «վտանգավոր արտադրանք» նշանակում է ցանկացած արտադրանք, որը չի համապատասխանում (բ) կետում ներկայացված «անվտանգ արտադրանք» սահմանմանը.
- դ) «լուրջ վտանգ» նշանակում է ցանկացած լուրջ վտանգ, ներառյալ՝ այն վտանգները, որոնք չունեն անմիջական ազդեցություն, և որոնք պահանջում են պետական մարմինների կողմից արագ միջամտություն.
- ե) «արտադրող» նշանակում է՝
 - i) արտադրանքը արտադրող, երբ վերջինս հիմնադրված է Համայնքում, ինչպես նաեւ ցանկացած այլ անձ, որն իրեն ներկայացնում է որպես արտադրող՝ արտադրանքի վրա փակցնելով իր անունը, առետրային նշանը կամ այլ տարբերանշան, կամ այն անձը, որը ձեւափոխում է արտադրանքը.
 - ii) արտադրողի ներկայացուցիչ, երբ արտադրողը հիմնադրված չէ Համայնքում, կամ եթե չկա Համայնքում հիմնադրված ներկայացուցիչ, ապա արտադրանքը ներմուծող.

- iii) մատակարարման շղթայի այլ մասնագետներ այնքանով, որքանով նրանց աշխատանքները կարող են ներազդել արտադրանքի անվտանգության առանձնահատկությունների վրա.
- զ) «դիստրիբյուտոր» նշանակում է մատակարարման շղթայի ցանկացած մասնագետ, որի գործունեությունը չի ազդում արտադրանքի անվտանգության առանձնահատկությունների վրա.
- է) «հետկանչ» նշանակում է ցանկացած միջոց, որի նպատակն արտադրողի կամ դիստրիբյուտորի կողմից սպառողներին արդեն մատակարարված կամ նրանց համար մատչելի դարձված վտանգավոր արտադրանքը վերադարձնելն է.
- ը) «շրջանառության կասեցում» նշանակում է ցանկացած միջոց, որի նպատակն է կանխել վտանգավոր արտադրանքի բաշխումը, ցուցադրումը եւ առաջարկը սպառողին:

ԳԼՈՒԽ II

Անվտանգության ընդհանուր պահանջները, համապատասխանության գնահատման չափորոշիչները եւ եվրոպական ստանդարտները

Հոդված 3

1. Արտադրողները պարտավոր են շուկայահանել միայն անվտանգ արտադրանք:
2. Արտադրանքը համարվում է անվտանգ, երբ հաշվի են առնվել համապատասխան ազգային օրենսդրությամբ կարգավորվող հայեցակետերը, երբ համապատասխան արտադրանքի անվտանգությունը

կարգավորող Համայնքի կոնկրետ դրույթների բացակայության դեպքում այն համապատասխանում է այն անդամ պետության ազգային իրավունքի հատուկ կանոններին, որի տարածքում շուկայահանվել է արտադրանքը: Նշված կանոնները մշակվել են Պայմանագրի եւ մասնավորապես՝ դրա 28-րդ եւ 30-րդ հոդվածներին համապատասխան եւ սահմանում են առողջությանը եւ անվտանգությանը ներկայացվող այն պահանջները, որոնք պետք է բավարարի արտադրանքը, որպեսզի շուկայահանվի:

Ենթադրվում է, որ արտադրանքն անվտանգ է այն դեպքում, երբ հաշվի են առնվել համապատասխան ազգային ստանդարտներով կարգավորվող վտանգները եւ վտանգի կատեգորիաները, երբ այն համապատասխանում է եվրոպական ստանդարտները փոխատեղող կամավոր ազգային ստանդարտներին, որոնց հղումները Հանձնաժողովի կողմից հրապարակվել են *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*՝ 4-րդ հոդվածին համապատասխան: Անդամ պետությունները պետք է հրապարակեն նշված ազգային ստանդարտներին կատարվող հղումները:

3. 2-րդ պարբերության մեջ նշված դեպքերից տարբեր՝ այլ դեպքերում արտադրանքի՝ անվտանգության ընդհանուր պահանջներին համապատասխանությունը գնահատվում է՝ հաշվի առնելով մասնավորապես հետեւյալ տարրերը, եթե այդպիսիք կան.

ա) համապատասխան եվրոպական ստանդարտները փոխատեղող կամավոր ազգային ստանդարտները՝ բացառությամբ 2-րդ պարբերության մեջ նշված ստանդարտների.

բ) այն ստանդարտները, որոնք մշակվել են այն անդամ պետությունում, որտեղ արտադրանքը շուկայահանվել է.

գ) Հանձնաժողովի առաջարկությունները, որոնց հիման վրա սահմանվում են արտադրանքի անվտանգության գնահատման ուղեցույցները.

- դ) համապատասխան ոլորտում գործող՝ արտադրանքի անվտանգության բարեխիղճ գործելակերպի կանոնները.
 - ե) համապատասխան ձեռքբերումների եւ տեխնոլոգիական զարգացումների առկա մակարդակը.
 - զ) անվտանգության վերաբերյալ սպառողների ողջամիտ ակնկալիքները:
4. Այն հանգամանքը, որ արտադրանքը համապատասխանում է անվտանգության ընդհանուր պահանջի կատարումն ապահովող չափորոշիչներին, մասնավորապես՝ 2-րդ կամ 3-րդ պարբերությունների մեջ նշված դրույթներին, չպետք է խոչընդոտի անդամ պետությունների իրավասու մարմիններին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ սահմանափակելու դրա շուկայահանումը կամ պահանջելու դրա շրջանառության կասեցումը կամ հետկանչը, եթե կա ապացույց, որ արտադրանքը վտանգավոր է, թեեւ այն համապատասխանում է պահանջներին:

Հոդված 4

1. Սույն հրահանգի նպատակներով 3(2) հոդվածի երկրորդ ենթապարբերության մեջ նշված եվրոպական ստանդարտները պետք է մշակվեն հետեւյալ կերպ.
- ա) այն պահանջները, որոնք նախատեսված են ապահովելու, որ նշված ստանդարտներին համապատասխանող արտադրանքը բավարարի անվտանգության ընդհանուր պահանջները, սահմանվում են 15(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան.
 - բ) նշված պահանջների հիման վրա Հանձնաժողովը, Տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի եւ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների վերաբերյալ կանոնների

ընագավառում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգին համապատասխան¹, կոչ է անում Ստանդարտացման եվրոպական մարմիններին մշակել ստանդարտներ, որոնք բավարարում են նշված պահանջները.

- գ) նշված մանդատների հիման վրա Ստանդարտացման եվրոպական մարմինները պետք է ընդունեն ստանդարտներ՝ Հանձնաժողովի և այլ մարմինների միջև համագործակցության ընդհանուր ուղեցույցներում ներառված սկզբունքներին համապատասխան.
- դ) Հանձնաժողովը յուրաքանչյուր երեք տարին մեկ 19(2) հոդվածում նշված զեկույցի շրջանակներում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ է ներկայացնում պահանջների և վերոնշված (ա) և (բ) ենթապարբերություններով նախատեսված ստանդարտացման մանդատների սահմանման համար նախատեսված իր ծրագրերի մասին զեկույց: Սույն զեկույցում մասնավորապես ներառվում են (ա) և (բ) ենթապարբերությունների մեջ նշված ստանդարտացման պահանջների և մանդատների, ինչպես նաև (գ) ենթապարբերության մեջ նշված ստանդարտների վերաբերյալ կայացված որոշումների վերլուծությունները: Այն ներառում է նաև այն արտադրանքի մասին տեղեկություններ, որի համար Հանձնաժողովը նախատեսում է սահմանել համապատասխան պահանջներ և մանդատներ, արտադրանքից բխող վտանգներ, որոնք պետք է դիտարկվեն, և այս ոլորտում ձեռնարկված ցանկացած նախապատրաստական աշխատանքի արդյունքներ:

2. Հանձնաժողովը *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* պետք է հրապարակի այս կերպ ընդունված և 1-ին պարբերության մեջ նշված պահանջներին համապատասխան մշակված եվրոպական ստանդարտներին կատարվող հղումները:

¹ ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37: 98/48/ԵՀ հրահանգով (ՊՏ L 217, 05.08.1998թ., էջ 18) փոփոխված հրահանգ:

Եթե Ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ստանդարտը նախքան սույն հրահանգն ուժի մեջ մտնելն ապահովում է անվտանգության ընդհանուր պահանջին համապատասխանություն, ապա Հանձնաժողովը պետք է որոշի իր հղումները հրապարակել *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*:

Եթե ստանդարտը չի ապահովում անվտանգության ընդհանուր պահանջին համապատասխանություն, ապա Հանձնաժողովը պետք է կասեցնի ստանդարտին կատարվող հղման հրապարակումն ամբողջությամբ կամ մասնակիորեն:

Երկրորդ եւ երրորդ ենթապարբերությունների մեջ նշված դեպքերում Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ կամ անդամ պետության պահանջով, 15(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, պետք է որոշի, թե արդյոք համապատասխան ստանդարտը բավարարում է անվտանգության ընդհանուր պահանջը: Հանձնաժողովը պետք է որոշի հրապարակել կամ կասեցնել դրան կատարվող հղման հրապարակումը՝ 98/34/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածով ստեղծված Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո: Հանձնաժողովը պետք է տեղեկացնի անդամ պետություններին իր որոշման մասին:

ԳԼՈՒԽ III

**Արտադրողների մյուս պարտավորությունները եւ դիստրիբյուտորների
պարտավորությունները***Հոդված 5*

1. Արտադրողներն իրենց համապատասխան գործունեության շրջանակներում պետք է սպառողներին տրամադրեն համապատասխան տեղեկություններ՝ հնարավորություն տալով նրանց գնահատելու նորմալ կամ ողջամտության սահմաններում կանխատեսելի ժամկետում արտադրանքի օգտագործման դեպքում դրանից բխող վտանգը, եթե նշված վտանգները, առանց համապատասխան զգուշացումների, անմիջապես տեսանելի չեն, եւ ձեռնարկելու նախազգուշական միջոցներ նշված վտանգները վերացնելու ուղղությամբ:

Զգուշացումների ներկայացմամբ որեւէ անձ չի ազատվում սույն հրահանգով սահմանված այլ պահանջների կատարումից:

Արտադրողներն իրենց համապատասխան գործունեության շրջանակներում պետք է ընդունեն իրենց կողմից մատակարարված արտադրանքի բնութագրին համապատասխան միջոցներ՝ հնարավորություն տալով նրանց՝

- ա) տեղեկանալու այն վտանգների մասին, որ արտադրանքը կարող է ներկայացնել.
- բ) որոշելու, թե արդյոք անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան գործողություններ, ներառյալ, եթե անհրաժեշտ է նշված վտանգներից խուսափելու համար կասեցնել արտադրանքի շրջանառությունը՝ պատճառ կերպով եւ արդյունավետորեն զգուշացնելով սպառողներին, կամ հետ կանչել արտադրանքը սպառողներից:

Երրորդ ենթապարբերության մեջ նշված միջոցները ներառում են, օրինակ՝

- ա) նշում՝ արտադրանքի կամ դրա փաթեթավորման միջոցով, արտադրողի ինքնության եւ այլ մանրամասն տվյալներ նրա մասին, արտադրանքի ծածկագրի կամ հարկ եղած դեպքում՝ արտադրանքի այն խմբաքանակի մասին, որին պատկանում է տվյալ արտադրանքը՝ բացառությամբ, եթե նշում չկատարելը հիմնավորված է.
- բ) բոլոր դեպքերում, որտեղ դա անհրաժեշտ է, շուկայահանված արտադրանքի նմուշի փորձարկման իրականացումը, բողոքների ուսումնասիրությունը եւ հարկ եղած դեպքում՝ բողոքների գրանցամատյանի վարումը եւ իրականացված դիտանցման մասին դիստրիբյուտորներին իրազեկելը:

Երրորդ ենթապարբերության (բ) կետում նշված գործողությունները պետք է իրականացվեն կամավոր հիմունքներով կամ 8(1)(գ) հոդվածին համապատասխան՝ իրավասու մարմինների պահանջով: Արտադրանքը պետք է շուկայից հետ կանչել միայն որպես վերջին միջոց, եթե մյուս միջոցների իրականացումը բավարար չէ կանխելու առկա վտանգներն այն դեպքերում, երբ արտադրողները դա անհրաժեշտ կհամարեն, կամ եթե նրանք պարտավոր են դա անել ի հավելումն իրավասու մարմնի կողմից ձեռնարկված միջոցի: Այն կարող է իրականացվել համապատասխան անդամ պետությունում առկա խնդրի առնչությամբ՝ պատշաճ գործելակերպի կանոնների շրջանակներում, եթե առկա են այդպիսի կանոններ:

2. Դիստրիբյուտորները պարտավոր են գործել անհրաժեշտ զգուշավորությամբ՝ ապահովելու անվտանգության կիրառվող պահանջներին համապատասխանությունը՝ մասնավորապես չմատակարարելով այնպիսի արտադրանք, որը նրանք գիտեն կամ պետք է ենթադրեին՝ իրենց տիրապետած տեղեկությունների վրա հիմնվելով եւ որպես մասնագետ, որ չի համապատասխանում նշված պահանջներին: Ավելին, նրանք իրենց համապատասխան գործունեության շրջանակներում մասնակցում են շուկայահանված արտադրանքի անվտանգության դիտանցմանը՝ հատկապես տրամադրելով արտադրանքից բխող

վտանգների հետ կապված տեղեկություններ, պահելով եւ տրամադրելով արտադրանքի ծագումը հավաստող անհրաժեշտ փաստաթղթեր եւ համագործակցելով վտանգներից խուսափելու նպատակով արտադրողների եւ իրավասու մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների մասով: Նրանք իրենց համապատասխան գործունեության շրջանակներում պետք է ձեռնարկեն միջոցներ, որոնք հնարավորություն կտան նրանց ծավալել արդյունավետ համագործակցություն:

3. Եթե արտադրողները եւ դիստրիբյուտորները գիտեն կամ պարտավոր էին իմանալ՝ հիմնվելով իրենց տիրապետած տեղեկությունների վրա եւ որպես մասնագետներ, որ շուկայահանված արտադրանքն այնպիսի վտանգ է ներկայացնում սպառողի համար, որն անհամատեղելի է անվտանգության ընդհանուր պահանջի հետ, ապա նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են անդամ պետությունների իրավասու մարմիններին՝ I հավելվածով սահմանված պայմանների համաձայն՝ տրամադրելով մանրամասներ, մասնավորապես՝ սպառողներին սպառնացող վտանգը կանխելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը, 15(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, պետք է հարմարեցնի I հավելվածով սահմանված տեղեկություններ տրամադրելու պարտավորությանը ներկայացվող կոնկրետ պահանջները:

4. Արտադրողները եւ դիստրիբյուտորները իրենց համապատասխան գործունեության շրջանակներում համագործակցում են իրավասու մարմինների հետ վերջիններիս պահանջով այն գործողությունների շուրջ, որոնք ձեռնարկվում են խուսափելու համար իրենց կողմից մատակարարվող կամ մատակարարված արտադրանքից բխող ռիսկերից: Արտադրանքի անվտանգության հարցերի շուրջ համապատասխան արտադրողների եւ դիստրիբյուտորների հետ այդ համագործակցության, ինչպես նաև երկխոսության ընթացակարգերը պետք է սահմանվեն իրավասու մարմինների կողմից:

ԳԼՈՒԽ IV

Անդամ պետությունների կոնկրետ պարտավորությունները եւ լիազորությունները

Հոդված 6

1. Անդամ պետություններն ապահովում են, որ արտադրողները եւ դիստրիբյուտորները կատարեն սույն հրահանգով նախատեսված իրենց պարտավորություններն այնպես, որ շուկայահանված արտադրանքը լինի անվտանգ:
2. Անդամ պետությունները պետք է ստեղծեն կամ նշանակեն մարմիններ, որոնք իրավասու են դիտանցելու արտադրանքի՝ անվտանգության ընդհանուր պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաեւ պետք է ապահովեն, որ նշված մարմիններն ունենան եւ կիրառեն սույն հրահանգով սահմանված համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ լիազորություններ:
3. Անդամ պետությունները պետք է սահմանեն իրավասու մարմինների խնդիրները, լիազորությունները, կազմակերպչական եւ համագործակցային հարցերին վերաբերող կարգավորումները: Նրանք տեղեկացնում են Հանձնաժողովին, իսկ վերջինս հաղորդում է այս տեղեկությունները մյուս անդամ պետություններին:

Հոդված 7

Անդամ պետությունները պետք է սահմանեն սույն հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ եւ դրանց կիրառումն ապահովելու նպատակով պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները: Նախատեսված

պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ: Անդամ պետություններն ամենաուշը մինչեւ 2004 թվականի հունվարի 15--ը Հանձնաժողովին պետք է հաղորդեն այդ դրույթների մասին և անհապաղ ծանուցեն դրանցում կատարվող ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 8

1. Սույն հրահանգի եւ մասնավորապես՝ դրա 6-րդ հոդվածի նպատակներով անդամ պետությունների իրավասու մարմիններն իրավունք ունեն ձեռնարկելու *մասնավորապես* ներքոնշյալ (ա) եւ (բ)-(գ) կետերում նշված միջոցները, հարկ եղած դեպքում՝

ա) ցանկացած արտադրանքի համար՝

i) կազմակերպելու անհրաժեշտ մասշտաբով համապատասխան ստուգումներ դրա անվտանգության առանձնահատկությունների մասով մինչեւ դրա օգտագործման կամ սպառման վերջնական փուլը, նույնիսկ եթե այն շուկայահանվել է որպես անվտանգ արտադրանք.

ii) պահանջելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները համապատասխան կողմերից.

iii) վերցնելու արտադրանքի նմուշներ եւ դրանք ենթարկելու անվտանգության ստուգումների.

բ) ցանկացած արտադրանքի համար, որը կարող է որոշակի պայմաններում վտանգ ներկայացնել՝

i) պահանջելու, որ դրա վրա հարմար, հստակ եւ հասկանալի ձեւով զետեղված լինեն նախազգուշացումների արտադրանքից բխող վտանգների մասին այն անդամ պետության պաշտոնական լեզուներով, որում արտադրանքը շուկայահանվել է.

ii) նախապայմաններ սահմանելու դրա շուկայահանման համար՝ այն անվտանգ դարձնելու նպատակով.

գ) ցանկացած արտադրանքի համար, որը կարող է վտանգ ներկայացնել որոշ անձանց համար՝

պահանջելու, որ նրանց ժամանակին եւ պատշաճ ձեով նախազգուշացվի առկա վտանգի մասին, ներառյալ՝ հատուկ նախազգուշացումների հրապարակման միջոցով.

դ) ցանկացած արտադրանքի համար, որը կարող է լինել վտանգավոր՝

այն ժամանակահատվածում, որն անհրաժեշտ է անվտանգությանը վերաբերող բազմապիսի գնահատումներ, ստուգումներ եւ հսկումներ իրականացնելու համար, ժամանակավորապես արգելելու դրա մատակարարումը, այն մատակարարելու առաջարկը կամ դրա ցուցադրումը.

ե) ցանկացած վտանգավոր արտադրանքի համար՝

արգելելու դրա շուկայահանումը եւ սահմանելու հարակից միջոցներ, որոնք անհրաժեշտ են արգելքի կատարումն ապահովելու համար.

զ) արդեն շուկայահանված ցանկացած վտանգավոր արտադրանքի համար՝

i) պահանջելու կամ կազմակերպելու դրա՝ շրջանառության փաստացի եւ անհապաղ կասեցումը եւ նախազգուշացնելու սպառողներին արտադրանքից բխող վտանգների մասին.

ii) արտադրողների եւ դիստրիբյուտորների հետ միասին պահանջելու կամ համակարգելու կամ հարկ եղած դեպքում՝ կազմակերպելու դրա՝ սպառողներից հետկանչը եւ դրա ոչնչացումը հարմար պայմաններում:

2. Երբ անդամ պետությունների իրավասու մարմինները ձեռնարկում են 1-ին պարբերությամբ նախատեսված և մասնավորապես՝ (դ)-(զ) կետերում նշված միջոցները, ապա նրանք պետք է գործեն Պայմանագրի եւ մասնավորապես՝ դրա 28-րդ եւ 30-րդ հոդվածներին համապատասխան այնպես, որ իրականացնեն վտանգի լրջությանը համարժեք միջոցներ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով նախազգուշացման սկզբունքը:

Այս համատեքստում նրանք խրախուսում եւ խթանում են արտադրողների եւ դիստրիբյուտորների կամավոր գործողությունները սույն հրահանգով եւ մասնավորապես՝ դրա III գլխով նրանց վրա դրված պարտավորությունների համաձայն, այդ թվում՝ հարկ եղած դեպքում մշակելով պատշաճ գործելակերպի կանոններ:

Անհրաժեշտության դեպքում նրանք կազմակերպում կամ պահանջում են 1(զ) պարբերությամբ նախատեսված միջոցների կատարումը, եթե արտադրողների եւ դիստրիբյուտորների կողմից իրենց պարտավորությունների կատարման ժամանակ ձեռնարկված գործողությունը բավարար կամ գոհացուցիչ չէ: Արտադրանքի հետկանչը պետք է կիրառվի որպես վերջին միջոց: Այն կարող է իրականացվել համապատասխան անդամ պետությունում առկա խնդրի առնչությամբ՝ պատշաճ գործելակերպի կանոնների շրջանակներում, եթե գոյություն ունեն այդպիսի կանոններ:

3. Իրավասու մարմինները լուրջ վտանգ ներկայացնող արտադրանքի դեպքում մասնավորապես իրավունք ունեն ձեռնարկելու անհրաժեշտ գործողություններ՝ պատշաճ առաքման հետ միաժամանակ համապատասխան այնպիսի միջոցներ կիրառելու համար, ինչպիսիք նշված են 1-ին պարբերության (բ)-(զ) կետերում: Նշված դեպքերը պետք է սահմանվեն անդամ պետությունների կողմից՝ գնահատելով յուրաքանչյուր գործն ըստ էության՝ հաշվի առնելով II հավելվածի 8-րդ կետում նշված ուղեցույցները:

4. Սույն հոդվածի համաձայն՝ իրավասու մարմինների կողմից ձեռնարկվելիք միջոցները հարկ եղած դեպքում հասցեագրվում են՝
- ա) արտադրողին.
 - բ) դիստրիբյուտորներին՝ իրենց համապատասխան գործունեության շրջանակներում, եւ մասնավորապես՝ ազգային շուկայում բաշխման առաջին փուլի համար պատասխանատու կողմին.
 - գ) ցանկացած այլ անձի՝ հարկ եղած դեպքում նպատակով ունենալով համագործակցել այնպիսի գործողությունների շուրջ, որոնք ձեռնարկվել են արտադրանքից բխող վտանգներից խուսափելու համար:

Հոդված 9

1. Շուկայի արդյունավետ վերահսկողությունն ապահովելու համար, որը միտված է սպառողների առողջության եւ անվտանգության պահպանության բարձր մակարդակ ապահովելուն, եւ որը հանգեցնում է իրենց իրավասու մարմինների միջեւ համագործակցությանը, անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան միջոցներ եւ ընթացակարգեր սահմանող մոտեցումների կիրառումը, որոնք կարող են ներառել մասնավորապես՝
- ա) ըստ արտադրանքի կամ վտանգների կատեգորիայի ճյուղային վերահսկողական ծրագրերի ստեղծումը, դրանց պարբերաբար թարմացումն ու իրականացումը եւ վերահսկողական աշխատանքների դիտանցումը, եզրակացություններն ու արդյունքները.
 - բ) արտադրանքի անվտանգության գիտական եւ տեխնիկական գիտելիքի կիրառումը եւ դրա թարմացումը.
 - գ) հսկողության աշխատանքների իրականացման եւ դրանց արդյունավետության պարբերաբար ստուգումն ու գնահատումը եւ

հարկ եղած դեպքում՝ վերահսկողական մոտեցման վերանայումը եւ վերահսկողության կազմակերպումը:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ սպառողները եւ շահագրգիռ մյուս անձինք հնարավորություն ունենան իրավասու մարմիններին ներկայացնելու արտադրանքի անվտանգության եւ վերահսկողական ու հսկողական աշխատանքների վերաբերյալ բողոքներ, ինչպես նաեւ դրանց պատշաճ կերպով ընթացք տրվի: Անդամ պետություններն ակտիվորեն տեղեկացնում են սպառողներին եւ շահագրգիռ այլ անձանց այս նպատակով մշակված ընթացակարգերի մասին:

Հոդված 10

1. Հանձնաժողովը խթանում է Եվրոպական ցանցում անդամ պետությունների՝ արտադրանքի անվտանգության համար պատասխանատու մարմինների գործունեությունը եւ մասնակցում է դրան՝ մասնավորապես ծավալելով վարչական համագործակցություն:
2. Նշված ցանցում Համայնքի մյուս գործող ընթացակարգերի, մասնավորապես՝ ՏԱՓՀ-ի հետ գործունեությունը ծավալվում է համակարգված ձեւով: Դրա նպատակը մասնավորապես դյուրացնելն է՝
 - ա) ռիսկերի գնահատման, վտանգավոր արտադրանքի, փորձարկման մեթոդների եւ արդյունքների, գիտական վերջին զարգացումների, ինչպես նաեւ հսկողական աշխատանքների համար կարելու մյուս հայեցակետերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը.
 - բ) համատեղ վերահսկողական եւ փորձարկման ծրագրերի ստեղծումն ու իրականացումը.
 - գ) վերապատրաստման աշխատանքների հարցում փորձի եւ լավագույն գործելակերպերի փոխանակումը եւ համագործակցությունը.

- դ) Համայնքի մակարդակով վտանգավոր արտադրանքի հետազոտության, շրջանառության կասեցման եւ հետկանչի հարցերում ընդլայնված համագործակցությունը:

ԳԼՈՒԽ V

Տեղեկությունների փոխանակումները եւ արագ միջամտություն պահանջող իրավիճակները

Հոդված 11

1. Եթե անդամ պետությունն ընդունում է միջոցներ, որոնք սահմանափակում են արտադրանքի շուկայահանումը կամ պահանջում են դրանց շրջանառության կասեցում կամ հետկանչ, ինչպես օրինակ՝ 8(1)(բ)-(գ) հոդվածով նախատեսված միջոցները, ապա անդամ պետությունն այնքանով, որքանով 12-րդ հոդվածով կամ Համայնքի կոնկրետ օրենսդրությամբ չի նախատեսվում նման ծանուցում, պետք է տեղեկացնի Հանձնաժողովին ընդունված միջոցների մասին՝ նշելով դրանք ընդունելու իր պատճառների մասին: Այն պետք է նաեւ տեղեկացնի Հանձնաժողովին նշված միջոցների ցանկացած փոփոխության կամ վերացման մասին:

Եթե ծանուցող անդամ պետությունը գտնում է, որ վտանգի հետեւանքները չեն տարածվի կամ չեն կարող տարածվել իր սահմաններից դուրս, ապա այն պետք է ծանուցի համապատասխան միջոցների մասին, քանի որ դրանք պարունակում են տեղեկություններ, որոնք կարող են արտադրանքի անվտանգության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնել անդամ պետությունների համար, եւ մասնավորապես, եթե նրանք պատրաստ են արձագանքելու նոր վտանգին, որի մասին դեռեւս չի զեկուցվել մյուս ծանուցումներում:

Սույն հրահանգի 15(3) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ Հանձնաժողովը, ապահովելով համակարգի արդյունավետությունը եւ պատշաճ գործունեությունը, պետք է ընդունի II հավելվածի 8-րդ կետում նշված ուղեցույցները: Ուղեցույցներով առաջարկվում են սույն հոդվածով նախատեսված ծանուցումների բովանդակությունը եւ օրինակելի ձեւը, եւ մասնավորապես ապահովվում են հստակ չափորոշիչներ՝ որոշելու այն պայմանները, որոնց համար ծանուցումը կարելի է 2-րդ ենթապարբերության նպատակներով:

2. Հանձնաժողովը պետք է ուղարկի ծանուցումը մյուս անդամ պետություններին, եթե չի գտնում, որ ձեռնարկված միջոցը ծանուցման մեջ ներառված տեղեկատվության հիման վրա արված ուսումնասիրությունից հետո չի համապատասխանում Համայնքի իրավունքին: Այդ դեպքում այն անմիջապես տեղեկացնում է գործողությունը նախաձեռնած անդամ պետությանը:

Հոդված 12

1. Եթե անդամ պետությունն արտադրողների եւ դիստրիբյուտորների հետ ընդունում է կամ որոշում է պարտադրված կամ կամավոր հիմունքներով ընդունել, առաջարկել կամ համաձայնեցնել այն միջոցները կամ գործողությունները, որոնք միտված են իրենց սեփական տարածքում կանխելու, սահմանափակելու կամ կիրառելու լուրջ վտանգ ներկայացնող արտադրանքի հնարավոր շուկայահանման կամ օգտագործման հետ կապված հատուկ պայմաններ, ապա այն անմիջապես դրա մասին ՏԱՓՀ-ի միջոցով ծանուցում է Հանձնաժողովին: Այն նաեւ պետք է անհապաղ տեղեկացնի Հանձնաժողովին ցանկացած այդպիսի միջոցի կամ գործողության փոփոխության կամ վերացման մասին:

Եթե ծանուցող անդամ պետությունը գտնում է, որ վտանգի հետեւանքները չեն տարածվի կամ չեն կարող տարածվել իր սահմաններից դուրս, ապա այն պետք է իրականացնի 11-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը՝ հաշվի առնելով II հավելվածի 8-րդ կետում նշված ուղեցույցներով առաջարկվող համապատասխան չափորոշիչները:

Չհակասելով 1-ին ենթապարբերությանը՝ անդամ պետությունները նախքան այդպիսի միջոցներ ընդունելու կամ գործողություն ձեռնարկելու վերաբերյալ որոշում կայացնելը կարող են Հանձնաժողովին փոխանցել լուրջ վտանգի առկայության մասին իրենց տիրապետության տակ գտնվող ցանկացած տեղեկություն:

Լուրջ վտանգի դեպքում նրանք Հանձնաժողովին ծանուցում են արտադրողների եւ դիստրիբյուտորների կողմից սույն հրահանգի 5-րդ հոդվածով սահմանված կամավոր միջոցների ձեռնարկման մասին:

2. Նշված ծանուցումներն ստանալիս Հանձնաժողովը պետք է ստուգի, թե արդյոք դրանք համապատասխանում են սույն հոդվածին եւ SUՓՀ-ի գործունեության նկատմամբ կիրառվող պահանջներին, եւ դրանք պետք է ներկայացնի մյուս անդամ պետություններին, որոնք իրենց հերթին ընդունված ցանկացած միջոցի մասին անմիջապես ծանուցում են Հանձնաժողովին:
3. SUՓՀ-ի գործունեության մանրամասն ընթացակարգերը սահմանվում են II հավելվածում: Դրանք Հանձնաժողովի կողմից հարմարեցվում են 15(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:
4. SUՓՀ-ն պետք է մատչելի լինի թեկնածու երկրների, երրորդ երկրների կամ միջազգային կազմակերպությունների համար, Համայնքի եւ նշված երկրների կամ միջազգային կազմակերպությունների միջեւ կնքված համաձայնագրերի շրջանակում՝ նշված համաձայնագրերով սահմանված պայմանավորվածություններին համապատասխան: Ցանկացած այդպիսի

համաձայնագիր հիմնված է փոխադարձության սկզբունքի վրա եւ ներառում է Համայնքում կիրառվող գաղտնիության մասին դրույթներին համապատասխան դրույթներ:

Հոդված 13

1. Եթե Հանձնաժողովը տեղեկանում է, որ արտադրանքի որոշ տեսակներ տարբեր անդամ պետությունների սպառողների կյանքին եւ անվտանգությանը վտանգ են սպառնում, ապա այն կարող է, անդամ պետությունների եւ համապատասխան վտանգը վերացնելու համար պատասխանատու Գիտական հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելով, ինչպես նաեւ եթե ծագում են Համայնքի գիտական հարցերով կոմիտեի իրավասության շրջանակին պատկանող գիտական խնդիրներ, ընդունել որոշում՝ նշված խորհրդակցությունների արդյունքի հիման վրա, 15(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ պահանջելով անդամ պետություններից ձեռնարկել 8(1)(բ)-(գ) հոդվածում նշվածներից որոշ միջոցներ, եթե միանգամից եւ միեւնույն ժամանակ՝
 - ա) անդամ պետությունների հետ նախապես կայացված խորհրդակցություններից պարզ է դառնում, որ վտանգի վերացման նպատակով նրանց ընդունած կամ ընդունելիք մոտեցումները զգալիորեն տարբերվում են, եւ
 - բ) արտադրանքի անվտանգության հարցի բնույթից ելնելով՝ վտանգը հնարավոր չի լինում վերացնել գործի հրատապության աստիճանին համապատասխան ձեւով՝ համապատասխան արտադրանքի նկատմամբ կիրառվող Համայնքի կոնկրետ օրեսդրությամբ սահմանված այլ ընթացակարգերի համաձայն, եւ
 - գ) վտանգը հնարավոր է արդյունավետորեն վերացնել՝ միայն ընդունելով Համայնքի մակարդակով կիրառվող համապատասխան միջոցներ՝

ապահովելու համար սպառողների առողջության եւ անվտանգության պահպանության հետևողական ու բարձր մակարդակ եւ ներքին շուկայի պատշաճ գործունեություն:

2. 1-ին պարբերության մեջ նշված որոշումները գործում են մեկ տարին չգերազանցող ժամկետով եւ կարող են նույն ընթացակարգին համապատասխան երկարաժամկետով եւս լրացուցիչ ժամկետներով, որոնցից ոչ մեկը չպետք է գերազանցի մեկ տարին:

Այնուամենայնիվ, հատուկ, առանձին նույնականացված արտադրանքին կամ արտադրանքի խմբաքանակներին վերաբերող որոշումները գործում են անժամկետ:

3. Վտանգավոր արտադրանքի արտահանումը Համայնքից, որի վերաբերյալ կայացվել է 1-ին պարբերության մեջ նշված որոշումը, պետք է արգելվի, եթե որոշմամբ այլ բան չի նախատեսվում:
4. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրականացնելու 1-ին պարբերության մեջ նշված որոշումները ոչ պակաս, քան 20 օրվա ընթացքում, եթե դրանից տարբեր այլ ժամկետ չի նախատեսվում նշված որոշումներով:
5. 1-ին պարբերության մեջ նշված միջոցների իրականացման համար պատասխանատու իրավասու մարմինները պետք է համապատասխան անձանց մեկ ամսվա ընթացքում հնարավորություն տան ներկայացնելու իրենց տեսակետները եւ պետք է համապատասխանաբար տեղեկացնեն Հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ VI

Կոմիտեի աշխատակարգերը*Հոդված 14*

1. Սույն հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները՝ կապված ստորեւ նշված հարցերի հետ, պետք է իրականացվեն 15(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան՝
 - ա) 4-րդ հոդվածում նշված միջոցները, որոնք վերաբերում են Ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ստանդարտներին.
 - բ) 13-րդ հոդվածում նշված որոշումները, որոնցով անդամ պետություններից պահանջվում է ձեռնարկել 8(1)(բ)-(գ) հոդվածում նշված միջոցները:
2. Սույն հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը՝ կապված բոլոր մյուս հարցերի հետ, պետք է իրականացվեն 15(3) հոդվածում նշված խորհրդակցական ընթացակարգին համապատասխան:

Հոդված 15

1. *Հանձնաժողովին* աջակցում է Կոմիտեն:
2. Այն դեպքերում, երբ հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 օր:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
4. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

ԳԼՈՒԽ VII

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 16

1. Անդամ պետությունների մարմինների կամ Հանձնաժողովի մոտ առկա տեղեկությունները՝ կապված արտադրանքից սպառողի առողջությանը եւ անվտանգությանը սպառնացող վտանգների հետ, պետք է մատչելի դարձվեն հանրությանը՝ թափանցիկության պահանջներին համապատասխան եւ չհակասելով դիտանցման եւ ուսումնասիրման աշխատանքների համար պահանջվող սահմանափակումներին: Հանրության համար պետք է մասնավորապես մատչելի լինեն արտադրանքի նույնականացման, վտանգի բնույթի եւ ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունները:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է ձեռնարկեն քայլեր, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ նրանց պաշտոնյաները եւ գործակալները չհրապարակեն սույն հրահանգի նպատակներով ստացված այն տեղեկությունները, որոնք պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում իրենց բնույթով կարգավորվում են մասնագիտական գաղտնիքի պահպանման սկզբունքով՝ բացառությամբ արտադրանքի անվտանգության այն

առանձնահատկություններին վերաբերող տեղեկությունների, որոնք պետք է մատչելի դարձվեն հանրությանը, եթե ստեղծված հանգամանքներն այդպես են պահանջում՝ սպառողների առողջությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

2. Մասնագիտական գաղտնիքի պահպանությունը չի խոչընդոտում իրավասու մարմիններին շուկայի դիտանցման եւ վերահսկողական աշխատանքների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը: Այն մարմինները, որոնք ստանում են մասնագիտական գաղտնիքի պահպանման սկզբունքով կարգավորվող տեղեկություններ, պետք է ապահովեն այդ գաղտնիքի պահպանությունը:

Հոդված 17

Սույն հրահանգը չի հակասում 85/374/ԵՏՀ հրահանգի կիրարկմանը:

Հոդված 18

1. Սույն հրահանգի համաձայն ընդունված ցանկացած միջոցի դեպքում, որով նախատեսվում է արտադրանքի շուկայահանման սահմանափակումներ կամ պահանջվում է դրա շրջանառության կասեցում կամ հետկանչ, պետք է հստակ նշվեն այն պատճառները, որոնց վրա այն հիմնվում է: Այդ մասին հնարավորինս շուտ պետք է ծանուցվի համապատասխան կողմին եւ նշվի համապատասխան անդամ պետությունում գործող դրույթներով նախատեսվող իրավական պաշտպանության միջոցների եւ դրանք կիրառելու ժամկետների մասին:

Համապատասխան կողմերին նպատակահարմարության դեպքում պետք է ընձեռվի նախքան միջոցն ընդունելը իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորություն: Եթե դա, ձեռնարկվելիք միջոցների հրատապությամբ պայմանավորված, հնարավոր չի եղել անել նախապես, ապա սահմանված

ժամկետում նշված միջոցն իրականացնելուց հետո նրանց պետք է ընձեռվի այդպիսի հնարավորություն:

Արտադրանքի շրջանառության կասեցում կամ դրա հետևանք պահանջող միջոցներով պետք է հաշվի առնվի դիստրիբյուտորներին, օգտագործողներին եւ սպառողներին խրախուսելու անհրաժեշտությունը՝ նշված միջոցների իրականացմանը նպաստելու համար:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն իրավասու մարմինների կողմից ձեռնարկված՝ արտադրանքի շուկայահանումը սահմանափակող կամ դրա շրջանառության կասեցում կամ հետևանք պահանջող ցանկացած միջոց իրավասու դատարանում բողոքարկելու հնարավորությունը:
3. Սույն հրահանգի ուժով ընդունված ցանկացած որոշում, որով սահմանափակվում է արտադրանքի շուկայահանումը, կամ պահանջվում է դրա շրջանառության կասեցում կամ հետևանք, չպետք է հակասի համապատասխան կողմի պարտավորությունների գնահատմանը՝ կոնկրետ գործով կիրառվող ազգային քրեական իրավունքի լույսի ներքո:

Հոդված 19

1. Հանձնաժողովը կարող է սույն հրահանգի կիրարկման եւ հատկապես շուկայի դիտանցման եւ վերահսկողության աշխատանքների հետ կապված ցանկացած հարց ներկայացնել 15-րդ հոդվածում նշված Կոմիտե:
2. 2004 թվականի հունվարի 15-ից հետո յուրաքանչյուր երեք տարին մեկ Հանձնաժողովը սույն հրահանգի կիրարկման մասին զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ:

Զեկույցը մասնավորապես պետք է ներառի տեղեկություններ՝ սպառողական արտադրանքի անվտանգության, մասնավորապես՝ արտադրանքի հետագծելիության բարելավված մակարդակի, շուկայի վերահսկողության

իրականացման, ստանդարտացման աշխատանքի, ՏԱՓՀ-ի գործունեության եւ 13-րդ հոդվածի հիման վրա Համայնքի կողմից ձեռնարկվող միջոցների մասին: Այս նպատակով Հանձնաժողովը պետք է իրականացնի համապատասխան խնդիրների, մասնավորապես՝ անդամ պետություններում կիրառվող մոտեցումների, համակարգերի եւ գործելակերպերի գնահատումներ՝ հաշվի առնելով սույն հրահանգի եւ արտադրանքի անվտանգության վերաբերյալ Համայնքի այլ օրենսդրության պահանջները: Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին տրամադրեն անհրաժեշտ ամբողջ օժանդակությունը եւ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ գնահատումներ իրականացնելու եւ զեկույցներ պատրաստելու նպատակով:

Հոդված 20

Հանձնաժողովը պետք է սահմանի ծառայությունների անվտանգության ապահովման համար Համայնքի գործողությունների մասով կարիքները, հնարավորություններն ու առաջնահերթությունները եւ մինչեւ 2003 թվականի հունվարի 1-ը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ ներկայացնի զեկույց՝ հարկ եղած դեպքում կից ներկայացնելով խնդրո առարկայի վերաբերյալ առաջարկներ:

Հոդված 21

1. Անդամ պետությունները 2004 թվականի հունվարի 15-ից գործողության մեջ են դնում սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Այդ ակտերն անդամ պետությունների կողմից ընդունվելու դեպքում պետք է պարունակեն սույն հրահանգին արված հղում կամ պետք է ուղեկցվեն այդպիսի հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման պարագայում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային իրավունքի այն դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 22

2004 թվականի հունվարի 15-ից 92/59/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում սույն հրահանգով՝ չհակասելով III հավելվածում նշված կարգով սույն հրահանգի փոխատեղման եւ կիրարկման վերջնաժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

92/59/ԵՏՀ հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն հրահանգին արված հղումներ եւ պետք է ընթերցվեն՝ համաձայն IV հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի:

Հոդված 23

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրը:

Հոդված 24

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2001 թվականի դեկտեմբերի 3-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ֆ. Վանդենբրուք

ՀԱՎԵԼՎԱԾ I**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐԵՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ**

1. 5(3) հոդվածով սահմանված տեղեկությունները կամ Համայնքի կանոնների հատուկ պահանջներով կիրառվելու դեպքում՝ համապատասխան արտադրանքի վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են այս նպատակով այն անդամ պետությունում նշանակված իրավասու մարմնին, որտեղ տվյալ արտադրանքը շուկայահանվում կամ շուկայահանվել է կամ որեւէ այլ կերպ մատակարարվել է սպառողներին:
2. Հանձնաժողովը, որին աջակցում է 15-րդ հոդվածում նշված Կոմիտեն, սահմանում է սույն հավելվածով նախատեսված ծանուցումների բովանդակությունը եւ կազմում է օրինակելի ձեւը՝ միեւնույն ժամանակ ապահովելով համակարգի արդյունավետությունը եւ պատշաճ գործունեությունը: Այն մասնավորապես, հավանաբար, ուղեցույցի տեսքով ներկայացնում է հատկապես մասնավոր դեպքերին կամ արտադրանքին վերաբերող այն հատուկ պայմանները որոշելու համար սահմանված պարզ եւ հստակ չափորոշիչները, որոնց համար սույն հավելվածի մասով ծանուցումը կարելու է:
3. Լուրջ վտանգի դեպքում այս տեղեկությունները պետք է առնվազն ներառեն հետեւյալը՝
 - ա) համապատասխան արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի ճշգրիտ նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկությունները.

- բ) համապատասխան արտադրանքից բխող վտանգի ամբողջական նկարագիրը.
- գ) արտադրանքի հետագծելիության համար կարելու բոլոր առկա տեղեկությունները.
- դ) սպառողներին սպառնացող վտանգները կանխելու ուղղությամբ ձեռնարկված գործողության նկարագրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՏԱՓՀ-ի ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ

1. ՏԱՓՀ-ով կարգավորվում է 2(ա) հոդվածով սահմանված արտադրանքը, որը լուրջ վտանգ է ներկայացնում սպառողների առողջության ու անվտանգության համար:

ՏԱՓՀ--ի շրջանակներում չի ընդգրկվել դեղագործական այն արտադրանքը, որը կարգավորվում է 75/319/ԵՏՀ¹ եւ 81/851/ԵՀՏ² հրահանգներով:

2. ՏԱՓՀ-ն, ըստ էության, նախատեսված է լուրջ վտանգների դեպքում տեղեկությունների արագ փոխանակման համար: Ց-րդ կետում նշված ուղեցույցներով սահմանվում են լուրջ վտանգների բացահայտման կոնկրետ չափորոշիչներ:
3. 12-րդ հոդվածի համաձայն ծանուցող անդամ պետությունները պետք է տրամադրեն առկա բոլոր մանրամասները: Ծանուցումը մասնավորապես պետք է պարունակի Ց-րդ կետում նշված ուղեցույցներով սահմանված տեղեկությունները եւ առնվազն՝

ա) արտադրանքի նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկությունները.

բ) առկա վտանգի նկարագրությունը, ներառյալ՝ ցանկացած փորձարկման/վերլուծության եւ դրանց վերաբերյալ եզրակացությունների արդյունքների ամփոփ նկարագիրը, որոնք կարելի է վտանգի մակարդակը գնահատելու համար.

¹ ՊՏ L 147, 09.06.1975թ., էջ 13: Հանձնաժողովի 2000/38/ԵՀ հրահանգով (ՊՏ L 139, 10.06.2000թ., էջ 28) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

² ՊՏ L 317, 06.11.1981թ., էջ 1: Հանձնաժողովի 2000/37/ԵՀ հրահանգով (ՊՏ L 139, 10.06.2000թ., էջ 25) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

- գ) ձեռնարկված կամ սահմանված միջոցների կամ առկայության դեպքում՝ գործողությունների բնույթը եւ տեղեկությունը.
- դ) մատակարարման շղթաների եւ արտադրանքի բաշխման, մասնավորապես՝ նշանակման երկրների վերաբերյալ տեղեկությունները:

Նշված տեղեկությունները պետք է փոխանցվեն՝ ծանուցման օրինակելի հատուկ ձեւի կիրառմամբ եւ 8-րդ կետում նշված ուղեցույցներով սահմանված եղանակներով:

Եթե 11-րդ կամ 12-րդ հոդվածների համաձայն ծանուցված միջոցով սահմանափակվում է քիմիական նյութի կամ պատրաստուկի շուկայահանումը կամ օգտագործումը, ապա անդամ պետությունները պետք է հնարավորինս շուտ ներկայացնեն դիտարկվող նյութին կամ պատրաստուկին կամ հայտնի եւ մատչելի փոխանյութերին առնչվող համապատասխան տվյալների ամփոփ նկարագիրը կամ դրանց կատարվող հղումները, եթե այդպիսի տեղեկությունը մատչելի է: Նրանք կներկայացնեն նաեւ ձեռնարկված միջոցի ակնկալվող հետեւանքները սպառողի առողջության եւ անվտանգության վրա՝ գոյություն ունեցող նյութի դեպքում 793/93 կանոնակարգի (ԵՏՀ)¹ 10(4) հոդվածում կամ նոր նյութի դեպքում 67/548/ԵՏՀ² հրահանգի 3(2) հոդվածում նշված քիմիական նյութերի ռիսկերի գնահատման ընդհանուր սկզբունքների համաձայն իրականացված ռիսկերի վերլուծության հետ համատեղ: 8-րդ կետում նշված ուղեցույցներում պետք է սահմանվեն այս առումով պահանջվող տեղեկությունների ստացման մանրամասները եւ ընթացակարգերը:

4. Եթե անդամ պետությունը նախքան միջոցներ ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելը 12(1) հոդվածի երրորդ ենթապարբերության համաձայն տեղեկացրել է Հանձնաժողովին լուրջ վտանգի մասին, ապա այն 45 օրվա

¹ ՊՏ L 84, 05.04.1993թ., էջ 1:

² ՊՏ 196, 16.08.1967թ., էջ 1/67: Հանձնաժողովի 2000/33/ԵՀ հրահանգով (ՊՏ L 136, 8.6.2000թ., էջ 90) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

ընթացքում պետք է տեղեկացնի Հանձնաժողովին՝ արդյոք հաստատում կամ փոփոխում է նշված տեղեկությունը:

5. Հանձնաժողովը հնարավորինս սեղմ ժամկետում պետք է ստուգի SUΦՀ-ի շրջանակներում ստացված տեղեկատվության՝ հրահանգի դրույթներին համապատասխանությունը եւ կարող է հարկ եղած դեպքում եւ արտադրանքի անվտանգությունը գնահատելու նպատակով իր սեփական նախաձեռնությամբ իրականացնի ուսումնասիրություն: Այդպիսի ուսումնասիրություն իրականացնելու դեպքում անդամ պետությունները պետք է անեն իրենց հնարավորության սահմաններում առավելագույնը՝ Հանձնաժողովին պահանջվող տեղեկությունները տրամադրելու համար:

6. 12-րդ հոդվածում նշված ծանուցումն ստանալուց հետո անդամ պետությունները ամենաուշը 8-րդ կետում նշված ուղեցույցներով սահմանված ժամկետում պետք է տեղեկացնեն Հանձնաժողովին հետեւյալի մասին՝

ա) արդյոք արտադրանքը շուկայահանվել է իրենց տարածքում.

բ) տվյալ արտադրանքի հետ կապված ինչ միջոցներ կարող են ընդունվել ստեղծված հանգամանքներում՝ նշելով վտանգի պատճառների, ներառյալ՝ դրա ցանկացած առանձնահատուկ գնահատման կամ իրենց որոշումը հիմնավորող ցանկացած այլ հատուկ հանգամանքի, մասնավորապես՝ գործողությունների կամ իրականացման բացակայության մասին.

գ) առկա վտանգի վերաբերյալ իրենց կողմից ստացվող ցանկացած համապատասխան լրացուցիչ տեղեկություն, ներառյալ՝ ցանկացած հետազոտության կամ վերլուծության արդյունք:

8-րդ կետում նշված ուղեցույցներով պետք է սահմանվեն հստակ չափորոշիչներ՝ ծանուցելու այն միջոցների մասին, որոնք իրականացվում են ազգային տարածքում, ինչպես նաեւ պետք է նշվի, թե ինչպես պետք է կարգավորվեն այն

վտանգներին վերաբերող ծանուցումները, որոնք անդամ պետությունը համարում է, որ սահմանափակվում են իրենց տարածքով:

7. Անդամ պետություններն անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին տվյալ միջոցի (միջոցների) կամ գործողության (գործողությունների) ցանկացած փոփոխության կամ վերացման մասին:
8. Հանձնաժողովը, 15(3)-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, պետք է պատրաստի եւ պարբերաբար թարմացնի Հանձնաժողովի եւ անդամ պետությունների կողմից ՏԱՓՀ-ի կառավարմանը վերաբերող ուղեցույցները:
9. Հանձնաժողովը ազգային համակարգողներին կարող է տեղեկացնել լուրջ վտանգ ներկայացնող արտադրանքի մասին, որը ներմուծվել կամ արտահանվել է Համայնքից եւ Եվրոպական տնտեսական տարածքից:
10. Տրամադրված տեղեկությունների համար պատասխանատու է ծանուցող անդամ պետությունը:
11. Հանձնաժողովն ապահովում է համակարգի պատշաճ գործունեությունը՝ մասնավորապես ծանուցումները դասակարգելով եւ ցանկավորելով ըստ հրատապության աստիճանի: Մանրամասն ընթացակարգեր պետք է սահմանվեն 8-րդ հոդվածում նշված ուղեցույցներով:

ՀԱՎԵԼՎԱԾ III**ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

(ՆՇՎԱԾ Է 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ)

Հրահանգ

Փոխապտեղման ժամկետը

Կիրարկման մեջ դնելու ժամկետը

92/59/ԵՏՀ հրահանգ

1994 թվականի հունիսի 29-ը

1994 թվականի հունիսի 29-ը

ՀԱՎԵԼՎԱԾ IV**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

(ՆՇՎԱԾ Է 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ)

Սույն հրահանգը	92/59/ԵՏՀ հրահանգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	Հոդված 2
Հոդված 3	Հոդված 4
Հոդված 4	—
Հոդված 5	Հոդված 3
Հոդված 6	Հոդված 5
Հոդված 7	Հոդված 5(2)
Հոդված 8	Հոդված 6
Հոդված 9	—
Հոդված 10	—
Հոդված 11	Հոդված 7
Հոդված 12	Հոդված 8
Հոդված 13	Հոդված 9
Հոդվածներ 14 եւ 15	Հոդված 10
Հոդված 16	Հոդված 12
Հոդված 17	Հոդված 13
Հոդված 18	Հոդված 14
Հոդված 19	Հոդված 15
Հոդված 20	—
Հոդված 21	Հոդված 17
Հոդված 22	Հոդված 18
Հոդված 23	Հոդված 19
Հավելված I	—
Հավելված II	Հավելված
Հավելված III	—
Հավելված IV	—